ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4, հեռ./ֆաքս +374 232 3 22 51

_____N_____
Ձեր՝ 26.07.2019 թ. թիվ 01/20/9874-19 հանձնարարականի

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պապիկյան,

Հայտնում ենք, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից բարձրացված հարցը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Քարի լճի» շրջակայքում «Ալագյազ սար» ՍՊԻ-ի կողմից կառուցված ռեստորանային համալիրին պատկանող տարածքի պարսպապատման օրինականության վերաբերյալ, եղել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ուշադրության կենտրոնում:

Տեղեկացնում ենք, որ «Ալագյազ սար» ՍՊԸ-ի տնօրենը 03.11.2018 թ-ին դիմել էր ՀՀ Արագածոտնի մարզի Ուշիի համայնքապետարան, ինքնակամ կառուցված պարսպի օրինականացման խնդրանքով:

Ուշի համայնքի ղեկավարի կողմից տարածքում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ «Ալագյազ սար» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ կառուցված պարսպի մի մասը կառուցված է իրեն պատկանող հողամասում, իսկ մի մասը՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում ընդգրկված հողամասի վրա:

Համայնքի ղեկավարի կողմից 07.11.2018 թ-ին ընդունվել է «Ալագյազ սար» ՍՊԸ-ին պատկանող հողամասի վրա կառուցված ինքնակամ պարսպի օրինական ճանաչելու մասին N125 որոշումը, որով «Ալագյազ սար» ՍՊԸ-ին պատկանող հողամասում կառուցված ինքնակամ պարիսպը ճանաչվել է օրինական և կառուցապատողի կողմից օրենքով սահմանված վճարները կատարելուց հետո ստացել է իրավունքի պետական գրանցում, իսկ այն մասը, որը դուրս է գտնվել ընկերությանը պատկանող հողամասի սահմաններից, քանդվել է կառուցապատողի կողմից:

Կից ներկայացվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկատվությունը վերը նշված խնդրի կարգավորման վերաբերյալ, «Ալագյազ սար» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի համայնքի ղեկավարի որոշումը՝ ինքնակամ կառուցված պարիսպը օրինական ճանաչելու վերաբերյալ որոշումը:

Հարգանքով՝

7/30/2019

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ հողաշինության և հողօգտագործման
բաժին-ՄՀՊՏ գլխավոր մասնագետ՝ Գ. Մանուկյան
Հեռ. +374 232 3 65 15